



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Ինքնուրույն ընթերցանության ժամերի
կազմակերպման մեթոդներ

ԱՌԱՐԿԱ

Դասվար

ՀԵՂԻՆԱԿ

Սեդրակյան Լիանորա Նորիկի

ՄԱՐԶ

Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի Ան. Շիրակացու անվան թիվ 6
հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 5	
Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպումը	5
Ինքնուրույն ընթերցանության մեթոդների բաղադրատարրերը	13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կորպով են ձևավորվում մանկական տարիքում: Մա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:

Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ.

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի, բարու և չարի, սիրո և ատելության, մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես կնպաստի գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցանությունը, իսկ ուսուցիչը ուղղորդողի դեր կկատարի այդ գործընթացում:

Ինքնուրույն ընթերցանությունը արդիական ու կարևոր նշանակություն ունի այն առումով, որ ընթերցանության ժամերին սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանն է դառնում սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունը: **Աշխատանքի նպատակն է** դիտարկել ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդներն ու դրանց բաղադրատարրերը, որոնք հնարավորություն են տալիս առավել դյուրին ու ընկալելի դարձնելու բնագրերի ընթերցանության, դրանցում ամփոփված գաղափարական-բովանդակային արժեքների ընկալման գործընթացը:

Այսպիսով՝ տարրական դասարանների «Մայրենի» դասընթացում ինքնուրույն ընթերցանության դերը հաշվի առնելով՝ **հետազոտական աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրը՝** դիտարկել ուսուցման այն հնարներն ու մեթոդները, որոնք արդյունավետ կդարձնեն ինքնուրույն ընթերցանության գործընթացը: Այս ուղղությամբ աշխատանքը կարևոր արժեք ունի, որովհետև բնագրերի ընթերցումն ու յուրացում նպաստում է նաև աշակերտների բառապաշարի հարստացմանը, ինչպես նաև մտածողության զարգացմանը:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպումը

Ինքնուրույն ընթերցանությունը բավականին բարդ գործընթաց է և մայրենի լեզվի դասի դասավանդման կարևոր բաղադրիչ, մասնավորապես ընթերցանության կարևոր փուլ, որի շրջանցումը կամ թերի կատարումը բերում է նրան, որ երեխաները բնագիրը սովորում են ոչ թե ընթերցել, այլ վերարտադրում են անգիր: Իսկ դա ոչ միայն թույլ չի տալիս հասնել մայրենի դասի գլխավոր նպատակներից մեկի՝ խոսք կառուցելու կարողության մշակմանը, այլև երեխաները չեն հասկանում իրենց կարդացածի իմաստը, չեն ըմբռնում գլխավոր միտքը, ենթատեքստը, չեն կարողանում դասեր քաղել ընթերցած ստեղծագործությունից: Այսինքն՝ ընթերցանությունը դառնում է աննպատակ: Ընթերցած նյութը երեխան կարող է պատմել, եթե հասկացել է կարդացածը, իսկ հասկանալով պատմելուն պետք է նախապատրաստել:

Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ՝ միմյանց հետ սերտորեն կապված¹: Իսկ դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա: Ասել է թե՛ ընթերցված նյութի վերարտադրության առաջին փուլը անմիջականորեն առնչվում է կարդալու ուսուցման տեխնիկային: Կարդալու կարողության շնորհիվ է

¹ Խաչատրյան Ա., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 2013, էջ 4-5:

զարգանում պատմելու մեթոդիկան, քանի որ ընթերցանության դասերին ամենակարևորը կարդացածը հասկանալն է:

Բառի ու բառաշարքերի ընթերցումն այն առանձնահատկությունն ունի, որ երեխաները բառի մեջ եղած բոլոր տառերը տեսնելու, դրանք իրենց համապատասխան հնչյուններին վերածելու և վանկերի ու ամբողջական բառի մեջ միավորելու հետ միասին պետք է կարողանան պահպանել նաև հայերենին հատուկ բառային շեշտը, որը չնչին բացառությամբ միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավոր հնչյունի վրա: Եթե այդ ձայնավորը ը-ն է, այդ դեպքում շեշտը դրվում է նախորդ վանկի ձայնավորի վրա, որովհետև ը-ն շեշտ չի վերցնում: Բառը հեշտ կարդալ սովորեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն հատվող այբուբենով կատարվող վարժությունները, երբ երեխաները վանկային ու հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, տառային համադրություններ են կատարում և վանկերով ու ամբողջովին կարդում վանկ առ վանկ հավաքած բառը: Օգտակար պետք է համարել նաև նմանությամբ կարդալը, որը հատկապես մեծ կիրառություն ունի բառաշարքերն ընթերցելիս: Այստեղ ընթերցվող նյութի թե՛ քանակական և թե՛ որակական բարդացում է կատարվում, որովհետև բառաշարքերը կազմվում են յուրաքանչյուր շարքում վանկային կառուցվածքով ու հնչյունային կազմով նման բառերի ընդգրկման սկզբունքով, որպեսզի առաջին բառի ընթերցումը հիմք ստեղծի երկրորդի ընթերցման համար: Այս բառաշարքերից յուրաքանչյուրում ընդգրկված առանձին խումբ բառերի միջև լինում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, առաջինը՝ ընթերցումը հեշտացնելու, իսկ երկրորդը՝ բառն արտաբերելուց առաջ այն անպայման մտովի կարդալու համար: Այս ինքնաստուգումը խիստ կարևոր է, որպեսզի երեխան առանց կարդալու, միայն կռահումով չարտասանի բառ: Բառակապակցության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել: Բառերի կապակցման, միմյանց վերագրելու ամենափոքր միավորը բառակապակցությունն է, որն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն, կայուն կամ ժամանակավոր կապակցություն: Այդ կապակցված լինելը կամ հատկանիշը առարկային վերագրելը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով կամ բառերի արտաբերման հնչերանգով, սրպեսզի կարմիր վարդ, սարի շուշան

բառակապակցություններից յուրաքանչյուրն արտաբերվի որպես իմաստով կապված միավոր, դրանցում եղած բառերը չհնչեն որպես առանձին ու անկախ միավորներ: Այստեղ բառակապակցության մեջ մտնող բառերի կապը զուտ տրամաբանական է, քերականական արտահայտություն չունի, սակայն ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով ու ցածրացումով այն կապն այնպես ցայտուն պետք է արտահայտվի, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես միմյանց հետ կապված մի ամբողջություն: Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար: Նախադասության մեջ մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ: Օգտակար պետք է համարել նաև ընթերցման տեմպի դանդաղեցումը, կրկնաընթերցումը և կարդացածի պատմելը: Դրանք հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու ոչ միայն կարդացած յուրաքանչյուր բառի բառիմաստը, այլև դրանց միջև եղած տրամաբանական ու քերականական կապերը և ամբողջ նախադասության միտքը, որը ոչ թե նրա մեջ եղած բառերի բառիմաստների պարզ գումարն է, այլ իմաստային բոլորովին նոր որակ: Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում: Բնագրի ընթերցման մյուս դժվարությունը կախված է հնչերանգի զգացողության բարդացման, տրամաբանական շեշտերի ու դադարների պահպանման հետ: Եթե նախադասությունը կարդալիս երեխան գրեթե յուրաքանչյուր բառից հետո դադար է տալիս, ապա այստեղ դադարները պետք է լինեն յուրաքանչյուր նախադասության վերջում, ձայնի բարձրացումն ու ցածրացումը կապված պետք է լինեն նախադասության տրամաբանական շեշտի և վերջակետի ճիշտ զգացողության հետ: Այս նպատակով յուրաքանչյուր բնագիր կարդալուց առաջ երեխաներին պետք է դիտել տալ բնագրին վերաբերող նկարը, իսկ ապա զրույց անցկացնել դրա շուրջ, որպեսզի հնարավոր լինի նրանց թեմայի ոլորտը մտցնել: Դրան մեծապես կարող է օգնել նաև բնագրի դիտումը կամ ,լուռ ընթերցումը, որը լուռ կարդալու ուսուցման ձևերից մեկն է : Գործադրելի են նաև բառերի շուրջ տարվող

բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը, կրկնաընթերցումը և այլն, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին վարժեցնել բնագրի ընթերցման մեջ, սովորեցնել գեղեցիկ ու կանոնավոր կարդալ, տիրապետել կարդալու կարողությանը:

Կարդալու սկզբնական կարողություն երեխաների մեջ սկսում է ձևավորվել դեռևս նախապատրաստական շրջանում, երբ նկարների ու գծային մոդելների օգնությամբ նրանք միավանկ ու բազմավանկ բառերը վանկերով ու ամբողջական բառերով կարդալու վարժություններ են կատարում: Կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երեք փուլերով՝ վերլուծում, համադրում և ավտոմատացում: Վերլուծական շրջանում կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երկու ձևով՝ տառերի ճանաչումով և վանկերի ու բառերի մեջ դրանց հնչյունների միավորումով: Երեխայի մեջ տեղի ունեցող հոգեբանական այս երկու գործողություններն ըստ ժամանակի չեն համընկնում միմյանց հետ և առանձնահատկություններով էլ տարբերվում են միմյանցից: Այս առումով վերլուծական շրջանն իր հերթին բաժանվում է երկու աստիճանի՝ ա) տառերի ճանաչում և դրանց համապատասխան հնչյունների հետ կապակցում կամ սովորած հնչյուն-տառերի գուգորդում և բ) վանկային վերլուծություն ու ընթերցում: Կարդալու ուսուցումը գործող երկու այբբենարաններով սկսվում է վանկից կամ ամբողջական բառից՝ նայած ուսուցումը որ մեթոդով է տարվում և ինչը պետք է կարդալու սկզբնական միավոր դառնա: Գրաճանաչության ուսուցումը գիտական հիմքով տանելու համար այն պետք է խարսխի լեզվական միավորների՝ հնչույթի, բառի ու նախադասության վրա: Սակայն վանկի զգացողությունն անհրաժեշտություն է ոչ միայն խոսելու կամ խոսքի բնական դրսևորման, այլև կարդալու համար: Միջվանկային ոչ տևական փոքրիկ դադարները կամ բնական անջատումներն ու թուլացումներն անհրաժեշտ են ոչ միայն խոսելու, այլև կարդալու, գուցե առավել ևս կարդալու համար: Հետևաբար՝ վանկը որքան խոսելու, նույնքան էլ կարդալու համար է անհրաժեշտ, քանի որ կարդալը, ըստ էության, գրաֆիկական կամ հնչյուն խոսքի հնչյունավորումը, կենդանացնում է, իսկ կենդանի խոսքն առանց վանկային թուլացումների և ուժեղացումների գոյություն չունի: Վանկը կարդալու ուսուցման և բուն կարդալու գործողության համար նույնքան բնական անհրաժեշտություն է,

որքան և կենդանի խոսքի կամ խոսելու գործողության համար: Ինչպես կարդալու, այնպես էլ հետագայում նաև պատմելու համար վանկի զգացողությունն անփոխարինելի նշանակություն ունի, որովհետև թե՛ գրելիս և թե՛ կարդալիս վանկը ընկալման, գրանցման կամ վերականգնման առաջին հիմնական միավորն է: Ընդ որում, պետք է նկատել, որ գրելու ուսուցման ժամանակ սկզբնական միավորը տառն է լինում, սակայն շուտով այն փոխվում է վանկի և մարդու գրեթե ամբողջ կյանքի ընթացքում մնում է վանկը, քանի որ իր մտքերը կամ լսածը գրի առնելիս մարդը մտքում ինքն իրեն թելադրում է ոչ թե հնչյուններով, այլ վանկերով: Իսկ կարդալու համար այն միավոր կարող է ընդունել հենց սկզբից՝ հետագայում բառի, բառակապակցության ու բառախմբերի փոխվելու և այդ անցումն զգալի կերպով արագացնելու պայմանով: Վանկի դերն առանձնապես մեծ է կարդալու ուսուցման գործում: Այստեղ հիմնականում դժվարությունն այն է, որ որպես արտասանական միավոր շատ հեշտ ընկալվող վանկը կարդալու ժամանակ հեշտ չի տարբերակվում, քանի որ վանկի կայուն մոդել չկա, այն խիստ դինամիկ է, և երեխաները դժվար բառի մեջ ինքնուրույն կերպով չեն կարող վանկն առանձնացնել ու կարդալ: Երեխան նախ յուրացնում է տառերը և ապա, յուրացնում է նաև այդ տառերի կապակցությունը՝ սկզբում վանկերի, ապա նաև բառերի մեջ: Կարդալու մտավոր գործողության զարգացման այս աստիճանը ռուս մեթոդիստ Ա. Տրոշինն անվանել է վանկային կամ վանկերով ընթերցելու աստիճան: Չնայած այս շրջանում ուսուցիչն աշակերտներից պահանջում է կարդալ միայն վանկերով կամ ամբողջական բառերով, սակայն այդ երբեք էլ չի նշանակում, թե երեխաները միանգամից ընկալում են վանկը կամ բառը: Իհարկե, այս պահանջը միանգամայն տեղին է, սակայն այս դեպքում վանկի կամ բառի մեջ տառերի ու դրանց հնչյունների միաձուլումը փաստորեն տեղի է ունենում մտքում՝ ներքնապես, որովհետև կարդալու կարողության ձևավորման այս աստիճանում երեխան, առանց վանկի կամ բառի մեջ եղած բոլոր տառերը ճանաչելու, չի կարող այն կարդալ: Գրաճանաչության ուսուցման գլոբալ կամ բառային մեթոդով կարդալ սովորեցնելիս նախապատրաստական շրջանի տևողությունն ավելացվում է, և բառերի գծային մոդելների օգնությամբ տարվող «կարդալու» վարժությունների միջոցով երեխաների մեջ ձևավորվում է ամբողջական բառերով կարդալու ալգորիթմ: Առաջադրված նկար-բառերի անվանումները գտնելու, դրանք ճիշտ արտասանելու,

ըստ արտասանության բնական միավորների դրանք մոդելավորելու, յուրաքանչյուր վանկի մեջ եղած հնչյունների քանակը և որակը որոշելու և մոդելի վրա անցկացնելու վարժությունների ընթացքում բառը բազմակողմանիորեն՝ թե՛ հնչյունային և թե՛ վանկային կազմի տեսակետից բավականաչափ ճանաչվում է: Ուշադրության կենտրոնում հիմնականում ամբողջական բառը դնելը, ինչպես արվում է հնչյութաբառային մեթոդով պարապելիս, և վարժություններն ամբողջական բառապատկերի շուրջ կատարելը նպաստում են կարդալու սկզբնական միավորը հենց սկզբից ևեթ բառը դարձնելուն, երեխաների մեջ մշակվում է ամբողջական բառերով կարդալու կարողություն: Սակայն դրան զուգընթաց թե՛ նախապատրաստական և թե՛ գրաճանաչության այբբենական շրջանում անհրաժեշտ վերլուծական ու համադրական աշխատանքներ են կատարվում նաև բառի հնչյունային կազմի շուրջ, որպեսզի ընթերցվող բառի մեջ աշակերտը կարողանա տեսնել բոլոր տառերը, կարողանա բառը կարդալ իր ամբողջության մեջ վերցրած, բոլոր կարգի փոփոխությունները նկատելով ու գրանցելով: Այս հատկանիշներից ամենակարևորը կարդացածը հասկանալն է. որը կարդալու ուսուցմանը զուգընթաց պետք է իրականացվի: Այս շրջանում կարդացածը հասկանալու գործողությունը դեռևս որոշակի կերպով առանձին կամ անջատ է կարդալուց. երեխան նախ կարդում է գրվածը, ապա հասկանում: Այս կրկնությունը կամ երկրորդ ընթերցումը փաստորեն հասկանալու համար է արվում. կարդացածի հնչյունային կազմի կրկնությունը միջոց է դառնում նրա բովանդակության մեջ թափանցելու, այն ընկալելու համար: Բառի ու բառաշարքերի ընթերցումն այն առանձնահատկությունն ունի, որ երեխաները բառի մեջ եղած բոլոր տառերը տեսնելու, դրանք իրենց համապատասխան հնչյունների վերածելու և վանկերի ու ամբողջական բառի մեջ միավորելու հետ միասին պետք է կարողանան պահպանել նաև հայերենին հատուկ բառային շեշտը, որը չնչին բացառությամբ միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավոր հնչյունի վրա: Եթե այդ ձայնավորը ը-ն է, այդ դեպքում շեշտը դրվում է նա-խորդ վանկի ձայնավորի վրա, որովհետև ը-ն շեշտ չի վերցնում: Բառը հեշտ կարդալ սովորեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն հատվող այբուբենով կատարվող վարժությունները, երբ երեխաները վանկային ու հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, տառային համադրություններ են կատարում և վանկերով ու ամբողջովին կարդում վանկ առ

վանկ հավաքած բառը: Օգտակար պետք է համարել նաև նմանությամբ կարդալը, որը հատկապես մեծ կիրառություն ունի բառաշարքերն ընթերցելիս: Այստեղ ընթերցվող նյութի թե՛ քանակական և թե՛ որակական բարդացում է կատարվում, որովհետև բառաշարքերը կազմվում են յուրաքանչյուր շարքում վանկային կառուցվածքով ու հնչյունային կազմով նման բառերի ընդգրկման սկզբունքով, որպեսզի առաջին բառի ընթերցումը հիմք ստեղծի երկրորդի ընթերցման համար: Այս բառաշարքերից յուրաքանչյուրում ընդգրկված առանձին խումբ բառերի միջև լինում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, առաջինը՝ ընթերցումը հեշտացնելու, իսկ երկրորդը՝ բառն արտաբերելուց առաջ այն անպայման մտովի կարդալու համար: Այս ինքնաստուգումը խիստ կարևոր է, որպեսզի երեխան առանց կարդալու, միայն կռահումով չարտասանի բառը: Բառակապակցության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել: Բառերի կապակցման, միմյանց վերագրելու ամենափոքր միավորը բառակապակցությունն է, որն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն, կայուն կամ ժամանակավոր կապակցություն: Այդ կապակցված լինելը կամ հատկանիշը առարկային վերագրելը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով կամ բառերի արտաբերման հնչերանգով, սրպեսզի կարմիր վարդ, սարի շուշան բառակապակցություններից յուրաքանչյուրն արտաբերվի որպես իմաստով կապված միավոր, դրանցում եղած բառերը չհնչեն որպես առանձին ու անկախ միավորներ: Այստեղ բառակապակցության մեջ մտնող բառերի կապը զուտ տրամաբանական է, քերականական արտահայտություն չունի, սակայն ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով ու ցածրացումով այն կապն այնպես ցայտուն պետք է արտահայտվի, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես միմյանց հետ կապված մի ամբողջություն:

Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար: Նախադասության մեջ մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ: Օգտակար պետք է համարել նաև ընթերցման տեմպի դանդաղեցումը, կրկնաընթերցումը և

կարդացածի պատմելը: Դրանք հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու ոչ միայն կարդացած յուրաքանչյուր բառի բառիմաստը, այլև դրանց միջև եղած տրամաբանական ու քերականական կապերը և ամբողջ նախադասության միտքը, որը ոչ թե նրա մեջ եղած բառերի բառիմաստների պարզ գումարն է, այլ իմաստային բոլորովին նոր որակ: Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում: Բնագրի ընթերցման մյուս դժվարությունը կախված է հնչերանգի զգացողության բարդացման, տրամաբանական շեշտերի ու դադարների պահպանման հետ: Եթե նախադասությունը կարդալիս երեխան գրեթե յուրաքանչյուր բառից հետո դադար է տալիս, ապա այստեղ դադարները պետք է լինեն յուրաքանչյուր նախադասության վերջում, ձայնի բարձրացումն ու ցածրացումը կապված պետք է լինեն նախադասության տրամաբանական շեշտի և վերջակետի ճիշտ զգացողության հետ: Այս նպատակով յուրաքանչյուր բնագիր կարդալուց առաջ երեխաներին պետք է դիտել տալ բնագրին վերաբերող նկարը, իսկ ապա զրույց անցկացնել դրա շուրջ, որպեսզի հնարավոր լինի նրանց թեմայի ոլորտը մտցնել: Դրան մեծապես կարող է օգնել նաև բնագրի դիտումը կամ «լուռ ընթերցումը», որը լուռ կարդալու ուսուցման ձևերից մեկն է: Գործադրելի են նաև բառերի շուրջ տարվող բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը, կրկնաընթերցումը և այլն, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին վարժեցնել բնագրի ընթերցման մեջ, սովորեցնել գեղեցիկ ու կանոնավոր կարդալ, տիրապետել կարդալու կարողությանը:

Ընթերցանության դասերին կարդալու կարողության հմտություններ ձևավորելուց հետո անցում է կատարվում պատմելուն նախապատրաստող հարցերին: Հարցերը պետք է կառուցել այնպես, որ դրանք ոչ միայն նպաստեն ստեղծագործության կամ նյութի մանրամասն վերարտադրմանը, այլև գլխավոր միտքը որոշելուն, գործող անձերի վարքը վերլուծելուն, դեպքերի պատճառահետևանքային կապերը ճշգրտելուն:

Ինքուրույն ընթերցանության խնդիրներն ու նպատակները 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում հետևյալներն են.

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,
- մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,
- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարըն ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն²:

Ինքնուրույն ընթերցանության մեթոդների բաղադրատարրերը

Մայրենիի դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

- զրույցը,
- բնագրի ընթերցումը,
- բառային աշխատանքը,
- պատմումը,
- ամփոփումը:

² Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 116-117:

Ինքնուրույն ընթերցանության դասերին անցկացվող զրույցներն ըստ իրենց բնույթի ու անցկացման ժամանակի լինում են երեք տեսակ ա. նախապատրաստական, այսինքն՝ բնագրի ընթերցմանը նախորդող կամ ընթերցումը նախապատրաստող, բ. ուղեկցող, այսինքն՝ կարդալուն ուղեկցող կամ բնագրի վերլուծման հետ կապակցված և գ. ամփոփիչ կամ թեմայի ամփոփման հետ կապված: Ձրույցի այս երեք ձևերն էլ հավասարապես գործադրվում են տարրական դասարաններում, երբեմն առանձին-առանձին, իսկ երբեմն էլ համատեղ: Իսկ թե զրույցի որ տեսակը երբ պետք է գործադրել, ուսուցիչն ինքը պետք է որոշի՝ ելնելով ընթերցվելիք բնագրի բնույթից, թեմայի դժվարությունից, աշակերտների պատրաստականության աստիճանից և այլն: Ձրույցի այս երեք ձևերն էլ բնագրի ընթերցումը գիտակցական ու արտահայտիչ, նյութի յուրացումը խոր, կայուն ու բազմակողմանի դարձնելու նպատակ են հետապնդում, սակայն առանձնահատուկ պայմաններում դրանցից ամեն մեկը տարբեր արդյունք կարող է տալ, ուստի դրանցից յուրաքանչյուրի գործադրությունը պետք է մտածված ու կշռադատված լինի: Նախապատրաստական զրույցը երբեք չպետք է սպառի բնագրի բովանդակությունը, այլ միայն պետք է մոտեցնի նրան, հող ստեղծի նրա ճիշտ ընկալման համար:

Ձրույցի մյուս ձևը կարդալուն զուգընթաց կամ բնագրի վերլուծման ժամանակ անցկացվող ուղեկցող զրույցն է, որի նպատակն է ուղղություն տալ աշակերտների մտքին, նրանց ներգրավել բնագրի վրա կատարվող տրամաբանական ու լեզվական աշխատանքներում, լրացուցիչ նոր տեղեկություններ տալ ուսումնասիրվող նյութի շուրջ և այլն: Եթե նախապատրաստական զրույցն աշակերտներին մոտեցնում է բուն նյութին, ապա ուղեկցող զրույցը խորացնում է նյութի մեջ, բացում բոլոր չբացված դռները:

Ինքնուրույն ընթերցանության դասերին ամենից ավելի հաճախ գործադրվում է ամփոփիչ զրույցը: Այն օգնում է գեղարվեստական ստեղծագործություններից բարոյա-խրատական ու դաստիարակչական հետևություններ անելու, իսկ գործնական բնույթի հոդվածներից՝ անհրաժեշտ գործնական եզրակացություններ բխեցնելու, ինչպես նաև՝ ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութի մեջ առանձնացնելու այն նոր բառերն ու լեզվական ձևերը, որոնք երեխաները սովորել են նրանից՝ դրանով իսկ շեշտելով ուսումնասիրվող յուրաքանչյուր բնագրի լեզվական արժեքը:

Բնագրի ուսումնասիրման աշխատանքը սկսվում է նրա ընթերցումից, ուստի և այն թե՛ ժամանակի և թե՛ ուշադրության տեսակետից ընթերցանության դասի ամենակարևոր ու հիմնական մասն է կազմում: Տարրական դասարաններում ուսումնասիրման համար ընտրված բնագրի դասարանական ընթերցումը բացառիկ կարևոր նշանակություն ունի ինչպես երեխաների մեջ կարդալու հմտությունների մշակման և կարդալու վարպետության կամ տեխնիկայի զարգացման ու կատարելագործման, այնպես էլ տվյալ նյութի բովանդակության ընկալման տեսակետից:

Տարրական դասարաններում աշակերտները թե՛ դասարանում և թե՛ տանը գրքի վրա աշխատելիս՝ ավելի շատ պետք է ձայնով կարդան, քան լուռ, որովհետև թե՛ կարդալու տեխնիկանի մշակման ու կատարելագործման և թե՛ կարդացածը հասկանալու տեսակետից այս տարիքում երեխաների համար սեփական ձայնի ունկընդումը բացառիկ կարևոր նշանակություն ունի: Լուռ կարդալն իր որակով ու դրսևորման ձևով, ըստ էության, մտովի կարդալ է, որովհետև իրականացվում է միայն աչքերի շարժումով: Խմբովին կարդալը տարրական դասարաններում ամենից հաճախ գործադրվող ու արդյունավետ ձևերից մեկն է: Այն հնարավորություն է տալիս բարձրացնելու կարդալու տեխնիկան, ընդօրինակել տալու ուսուցչի կարդալու եղանակը, ձայնի տոնն ու հնչերանգը, ոտանավորի երաժշտականությունը ու ռիթմը, որը լսելով դժվար է ընկալել և ավելի քան յուրացնել Դերերով կարդալը ևս տարրական դասարաններում կարդալու ամենարդյունավետ ու հանձնարարելի ձևերից մեկն է և գործադրվում է գրեթե բոլոր դասարաններում: Այն օգտագործվում է որպես կարդալու տեխնիկայի, հատկապես՝ որպես արտահայտչականության մշակման միջոց:

Բնագրի վրա տարվող աշխատանքի ձևերից մեկն էլ բառային աշխատանքն է, որը երեք կարևոր կողմ ունի՝ անձանոթ բառերի ու դարձվածքների բացատրում, ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների հայտնաբերում և նոր բառերի յուրացում ու ակտիվացում կամ խոսքի մեջ դրանց օգտագործում: Անձանոթ բառերի ու դարձվածքների բացատրությունները կատարվում են դասի տարբեր փուլերում՝ բնագրի առաջին ընթերցումից առաջ, առաջին ընթերցման ժամանակ և առաջին ընթերցումից հետո՝ նայած բացատրվող բառի կամ դարձվածքի բնույթին ու

կիրառությանը: Նախապատրաստական գրույցի ժամանակ օգտագործվում և հենց տեղն ու տեղն էլ բացատրվում են այն բառերն ու դարձվածքները, որոնք կապված են նյութի գլխավոր մտքի հետ: Բնագրի առաջին ընթերցման ժամանակ, առանց ընթերցումն ընդհատելու, միայն մեկ - երկու դիպուկ հոմանիշով բացատրվում են այն բազմիմաստ բառերն ու դարձվածքները, որոնք իրենց կոնկրետ իմաստն ստանում են տվյալ բնագրում միայն, իսկ բնագրից դուրս կամ այլ բնագրում կարող են միանգամայն այլ իմաստներ արտահայտել: Այն բառերը, դարձվածքները, որոնց կոնկրետ իմաստը չիմանալը չի կարող անդրադառնալ նյութի հիմնական բովանդակության ճիշտ ընկալման վրա, պետք է բացատրել բնագրի առաջին ընթերցումից հետո՝ ուսուցչի կամ աշակերտների երկրորդ ընթերցման ժամանակ:

Նյութի հետագա մշակումը կամ բնագրի վրա տարվող աշխատանքը սովորաբար անցկացվում է աշակերտների ընթերցումից հետո, սակայն առանձին դեպքում այն կարող է նաև միաձուլվել աշակերտների ընթերցման ընթացքում բնագրի վրա տարվող բառային աշխատանքի հետ և նյութն ընդգրկել ամբողջովին՝ ոչ միայն լեզվական կամ ձևի տեսակետից, այլև բովանդակության առումով: Այս աշխատանքի նպատակը ուսումնասիրվող նյութի բովանդակությունը երեխաների համար հնարավորին չափ պարզելը, գործող անձերի ու դրանց գործողությունների ընդհանուր բնութագիրը տալը և դրանով իսկ երեխաներին ճիշտ ուղու վրա դնելը, ամբողջության մեջ վերցրած նյութի յուրացումն ապահովելն է:

Ուսումնասիրվող բնագրի բովանդակության վերարտադրումը նրա վրա տարվող աշխատանքի հիմնական ձևերից մեկն է: Մեր դպրոցներում պատմելը կամ բովանդակության վերարտադրելն ավելի շուտ դիտվում է որպես կարդացածի յուրացման ստուգման միջոց և ոչ թե ուսուցման նպատակ, մինչդեռ մայրենի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ պատմելու ուսուցումն է, որը նույնքան կարևոր է, որքան և կարդալու կամ գրելու ուսուցումը: Այլ բան է, երբ պատմելը դիտվում է որպես ուսուցման միջոց կամ ուսուցվածի ստուգման միջոց, և բոլորովին այլ, երբ այն դիտվում է որպես ուսուցման նպատակ: Առաջին դեպքում այն կիրառվում է ըստ հարկի՝ որևէ նպատակի հասնելու համար, իսկ երկրորդ դեպքում հենց ինքը նպատակ է և համանման բազմաթիվ միջոցներ ենք գործադրում այդ նպատակը իրականացնելու համար:

Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է լավ ընթերցանությունը: Այդ որակներն են՝

- ճիշտ կամ անսխալ կարդալ,
- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալ,
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- արագ կարդալ:

Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու: Ընթերցանության ընթացքում, երբ աշակերտը կարդում է, նա «իր վրա է վերցնում» կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Այսպիսով՝ ինքնուրույն ընթերցանությունը սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ձևերից է, որը նպաստում է.

- ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը,
- վերլուծական հմտությունների դրսևորմանը,
- ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը,
- կրթության զարգացմանը և այլն³:

³ Թորոսյան Կ., Չիբուխյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6, էջ 35-36:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք, անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում ընթերցանությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին:

Կարևորելով ինքնուրույն ընթերցանության մեթոդների ճիշտ ընտրությունը, ինչը նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը՝ մեր աշխատանքում առաջադրել էինք խնդիր՝ ուսումնասիրելու ինքնուրույն ընթերցանության գործընթացը արդյունավետ դարձնող ուսուցման հնարներն ու մեթոդները: Իրականացնելով մեր առջև դրված խնդիրը՝ կարող ենք փաստել՝ կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են ինքնուրույն ընթերցանությունն ու դրան հաջորդող փուլը՝ պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկվում է լիարժեք ուսումնասիրել և կիրառել հնարավոր մեթոդներն ու հնարները, որպեսզի նախատեսված յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից ամբողջությամբ վերարտադրվի, սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
3. Գյուլամիրյան Ջ., «Մայրենի լեզու» դասագրքի մեթոդական ուղեցույց, Երևան, 2004:
4. Թորոսյան Կ., Չիրուխյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6:
5. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:
6. Կանեցյան Գ., Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990:
7. Մանկավարժություն, Երևան, 2007:
8. Տեր-Գրիգորյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980: